

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարեկան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Բաշտարարութիւնը ընդունում է ամեն լեզուով.

Բաշտարարութիւնների համար վճարում են
խաղաղանիւր բառին 2 կոպեկ.
Տէլեֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ՔՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՅՎԱԾ Է ԿԷՍ ՏԱՐՎԱՅ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ԻՐԱՎԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՔԱՆՆԵՐԻ ՏԱՐԻ

«Մշակ» վեց ամսվայ գինն է, յուլիսի 1-ից մինչև տարեկան վերջը ՎՅՑ ռուբլի. մէկ ամսվայ
ընդամենը ռուբլի: Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն կէս տարեկան համար 3 դոլլար,
Եւրոպայի բաժանորդները— 16 ֆրանկ:

Կարողութեան ուրիշ քաղաքներէն «ՄՇԱԿ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և
նրանցից ուղարկելու, պէտք է դիմել հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция „МШАКЪ“;
իսկ արտասահմանից՝ ТИФЛИС, Rédaction du journal arménien „MSCHAK“.

Թայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով:

Ա Պ Ա Ռ Ի Կ Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն Զ Է Ը Ն Դ Ո Ւ Ն Վ Ո Ւ Մ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նպատակադարձար պահանջներ. — ՆԵՐՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Նամակ Արարելայրէն.
Նամակ Կաղարանից. Ներքին լուրեր. — ՀՆ-
ՈՒՂԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐ ՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱ-
ՍԻՐԱԿԱՆ. — Փնտաղաներին և հարմարութիւններին:

ՆԱԿԱՏԱԿԱՑԱՐՄԱՐ ՊԱՆԱՆՔՆԵՐ

Շարաթ չէ անցնում, որ մենք չը լսենք
լուրեր նոր կազմվող արդիւնադրական
ընկերակցութիւններին մասին: Այդ
ընկերակցութիւններին մեծ մասը
կենտրոնացած է Բագուի մէջ և նրա շրջ-
ջակայքում և միայն մի փոքր մասը մեր
երկրի միւս կողմերում: Յամենայն դէպս
ընկերակցութիւններ կազմվում գաղափարը
բաւականաչափ պատուաստվել է մեր
վաճառականներին և արդիւնադրողներին:
Չըբանում և որքան առաջ դիմար և ան-
կարելի էր համարվում ընկերակցական
կազմակերպութեամբ գործ թողնել տանը,
այնքան այժմ սկսում է աննպատակ և ան-
գործնական համարվել առանց ընկերակցու-

թեան գործավարութիւնը: Բացի պաշտո-
նապէս հաստատված ընկերակցութիւններից
կազմվել են և կազմվում են բազմաթիւ
մանր ընկերակցութիւններ, որոնք վաւե-
րացվում են նոտարի միջոցով և անմիջա-
պէս ձեռնարկում գործունէութեան:

Ընկերակցութիւններին միջոցով կարելի
էր ձեռնարկել փոքր գումարներից կազմել
մեծ գումարներ և մտածել այնպիսի
խոշոր ձեռնարկութիւնների մասին, որոնց
մասին առաջ դիմար էր երազել: Այժմ
այլ ևս ոչ ոք չէ զարմանում, երբ լսում
է, որ կազմվեց մի նոր ընկերակցութիւն
միլիոն, մէկ և մի քանի միլիոն ռուբլի
գումարներով, որովհետեւ նա կազմվում
է բազմաթիւ ակցիաներից կամ բաժնի-
ւերից, որոնցից իւրաքանչիւրը արժէ 250,
500, 1000 ռուբլի: Այդպիսով թէ փոքր
գումարները գրաւում են արդիւնաւէտ
շահագործութեան մի մեծ ռապարեզ և
թէ իրագործութիւն են ստանում այնպի-
սի ձեռնարկութիւններ, որոնց համար
անհրաժեշտ են խոշոր գումարներ:

Մենք կարծում ենք, որ ընկերակցու-
թիւնների վրա կան մի քանի պարտակա-

նութիւններ, որ նրանք պէտք է աչքի
առաջ ունենան, որպէս զի արդիւնադր-
ական կազմակերպութեան այդ նոր եղա-
նակը դառնայ աւելի օգտաւէտ և նպա-
տակարար և տարածվի աւելի ընդար-
ձակ կերպով մեր երկրում:

Նախ և առաջ պէտք է շատ գովել
համարել այն, որ ընկերակցութիւններից
շատերի բաժնիները փոքր գին ունեն և
արժեն ոչ թէ մի քանի հազարներ, այլ մի
քանի հարիւր ռուբլի, մեծ մասամբ 250
ռուբլի: Ընկերակցութիւն կազմողները
պէտք է խրախուսեն փոքրագումար բա-
ժնիների սահմաններ, որովհետեւ այդ ձե-
ւով հեշտ է կապել բազմաթիւ անձանց
միասին և դժուար չէ այդ բաժինը յանձ-
նել ուրիշին: Գումար գիւղատնտեսական ըն-
կերակցութիւնը իր բաժնեգիրը նշանակել է
100 ռուբլի և այդպիսով կարողութիւն է
տալիս նոյն իսկ գիւղացիներին մասնակցել
գիւղատնտեսական այդ ընկերակցութեան
մէջ: Մի ուրիշ պահանջ պէտք է դնել և
այն, որ գործարան ունեցող ընկերակցու-
թիւնները առանձին հոգ տանեն աշխա-
տաւորների համար առողջ և յար-
մար բնակարաններ շինելու և
այդպիսով իրագործեն այն, ինչ որ առան-
ձին գործարանատէրերը չեն ցանկանում
մինչև այժմ իրագործել: Նոյնը կարելի է
ասել և Տրեքիցի պաշտպանվելու միջոց-
ներ մտցնելու մասին:

Կարևոր է նոյնպէս, որ ընկերակցու-
թիւնները ունենան կրթված և փորձված
մասնագէտներ, որոնց կարելի լինի
յանձնել գործը պաշտօն կերպով և ա-
ռաջն առնել այնպիսի դժբաղդութիւննե-
րի, որտեղ գլխաւոր պատճառը եղել է
գործին անտեղեակ լինելը և անհոգու-
թիւնը: Շատ օգտաւէտ է ունենալ գոր-
ծարանների շատերում նաև լաբօրա-
տօրական և մասնագիտական փորձերի
համար: Մեր ներկայ գործարանները ա-
ւելորդ չափով ընկն են համարում լաբօ-

րատորանները, մինչդեռ առանց այդպիսի
հիմնարկութիւնների, առանց փորձերի
անկարելի է տեղական կատարելագործու-
թիւններ անել և աւելացնել արդիւնա-
գործութեան ոյժը:

Մենք հարկաւոր ենք համարում ուշադ-
րութիւն դարձնել և մի հանգամանքի վը-
րա, որ մեր նոր կազմվող ընկերակցու-
թիւնները չը պէտք է նպաստեն արհես-
տական կերպով իրանց բաժնեգրների ար-
ժէքի բարձրանալուն, և իրանց բաժնիները
չը պէտք է վաճառել հանեն մինչև արդիւնա-
գործութեան հաստատուելը և կանոնաւոր
ընթացք ստանալը: Արհեստական կերպով
բարձրացած գները յետոյ ընկնում են և
սաստիկ վնասում ամբողջ ձեռնարկու-
թեան աւելի մեծ չափով, քան նա տեղի
կուենար կանոնաւոր գործավարութեան
ժամանակ:

Վերջապէս, ամենակարևոր և էական
պահանջներից մէկն է՝ սահմանել ամենա-
մանրամասն հաշուետուութիւն, որպէս զի
ամեն մի թիւրիմացութեան առաջն առն-
վի անմիջապէս և գործը չը վնասվի կա-
կածելի լուրերից: Այս և որանց նման
պահանջներին լիութիւն տալով մենք կա-
րող կը լինենք տնտեսական կեանքի այս
նոր կազմակերպութեանը տալ աւելի նը-
պատակադարձ և օգտաւէտ ձև:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

«Բաղմալէպ» ամսագրի յուլիսի համարում
գտնում ենք մի շարք համակրական դիտադու-
թիւններ «Մշակ» մասին: Միմյանիս վանքի
օրգանը մեզ հետ համաձայն է մի քանի հար-
ցերի մէջ, բայց տեղ-տեղ էլ կամենում է մեզ
ուղղել: Այսպէս, մենք ասել էինք, որ եթէ Պե-
շիվաշեանի պէս գաղափարական բանաստեղծ-
նի գործերը, երգերը մեր մէջ իդէալ չեն դառ-
նում, հետևողներ չեն գտնում, պատճառն այն

համար:

Վնասական մրրկները նրանց զլխին են խոր-
տակվում. ցուրտը, քամին, կատաղի բուրը նը-
րանց են հարուստում. բայց վատ եղանակները
հանդարտվելուց յետոյ, նրանք մնում են իրանց
տեղը, նորից նոյնպէս հանդիստ ու գործը, ա-
ռաջվանից աւելի ամուր և շիտաւոր: Ննչպէս ա-
մեն արարած, նրանք էլ սիրում են կեանքի
զուարճութիւնները. դժբաղդութիւնը չէ կարող
ծուլ նրանց. վրայն ու ձախորդութիւնները
չեն դրոյնում նրանց ճակատին յուսալուստու-
թեան կնիքը: Այլաբանութեան առած, ոչ մեր բա-
նեւադը արեւ նրանց բարեկամական կանաչ
խոտին է նոր թարմութիւն տալիս և ոչ մեր
անաղիւթութիւններն են նրանց դրոյնեան բող-
բուց սպանում:

Այդպիսի մարդկանց վրա կարելի է յայտ գը-
նել, ինչպէս լեռի ժայռի վրա՝ նրանց պէտք է
ապակներ, պէտք է պողպատեայ օղակներով
ամրացնել: Նրանք պէտք կը գան, որպէս ժայռ՝
մանչող ուղիւնստի դէմ: Մեր ջահիլութեան ծա-
ղիկ հասակում մենք չենք գնահատում այդպի-
սիներին և մտով անցնում ենք սնաւոր, անդգն,
անտարբեր... որովհետեւ նրանք չեն կարող չո-
յել ոչ մեր լինելաւորութիւնը և ոչ մեր փառա-
սիրութիւնը: Նրանք նրանք ուղղակի դրոյնում
են մեզ բացարձակապէս մեր հայեացքներին
ընդդիմադրով... Հասարակութեան մէջ նրանք
մեռած են: Նրանք ձանձրացնող խոսակցիներ
են, որ ոչ միայն իրանք չեն սիրում խոսել, այլ
լսել իսկ չը գիտեն: Այլ ու ձախ անհրաժեշտ խ-
րանց ամօթալի անհրաժեշտութիւնն ու ձեռքի դը-
ռեկութիւնն են ցոյց տալիս: Մեր աշխարհիկ
ընկերների մէջ լինում արատ կարող են բերել:
Նրանք չեն էլ հոգում իրանց հագուստների մա-
սին. և դրա համար շատ անգամ դաւնիկ են ե-
րևում: Մենք ծածուկ աղօթում ենք Աստուծուն,
որ մեզ չուտ-չուտ լըրար չը հանդիպենք: Նրանք

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՓԵՍԱՑՈՒՆԵՐԻՆ ԵՒ ՀԱՐՍՆԱՑՈՒՆԵՐԻՆ

(Ջերմ Կ. Ջերմից)

I

Նախ խօսքս ձեռք եմ ուղղում, միամիտ ու նա-
զելի աղջկաներ: Ձեզանից բանի-քանիսներին
պէտք է նախադրուցանել այն չնաղաղված երկուս-
սարդներից, որոնք անխնայ ձեր գեղեցիկ լիւրերը
տանում են: Ախ, ես վախեցում եմ, որ դուք
երբեք չը հասնէք այն պարզ ճշմարտութեանը,
թէ ձեր սիրեցեալի քնքշւոյ հայեացքները, խոր
հառչանքը, կրակոտ ու տոբանքներով լի ֆը-
րազները—ամենախախտ հիմք են ընտանե-
կան երջանկութեան: Գիտենալ հառչել և գե-
ղեցիկ ֆրազներ ասել—քիչ է: Շատ անգամ այդ
բոլորը ընտանեկան կեանքի մէջ գաղտնի է
հասարակութիւնից երես դարձրած մարդու սուր
և կծու յանդիմանութիւններ:

Ամուսին կարելու համար, նախ քան կտորի
ընտրութեան վրա վերջնականապէս կանգնելը,
պէտք է հարկը անգամ չափել, մէկ-կտորի:
Լաւ իմանալ, որ «էրկը» հագուում չէ, և եթէ
մէկ անգամ կարեցիք, ինչքան կուզէ լայն կամ
նեղ երևալ, դուք պարտաւոր էք հագնել մինչև
գերեզման: Ձէ կարելի նրան հագուատի պէս
փոխել, չուղիւղել կամ լայնացնել: Երբ ցրտերը
ընկնեն և դուք սարսափով նկատեք, որ նա ձեզ
բաւարար տալով չէ տալիս, պէտք է իմա-
նալ, որ չէ կարելի նրան հանել ու մի ուրիշ
աւելի տաք բանով փաթկնել: Ինչպէս որ կա-
րէք, այնպէս էլ պիտի հագնէք, կեանքի ամեն
դէպքերում, տարվայ ամեն եղանակներին:

Առաջին հայեացքից կտորը ձեզ շատ դուր կը

գայ, սիրուն, մոզային նկարով և հրաշալի դոյ-
նով: Բայց պէտք է համոզվէք, թէ արդեօք դոյ-
նը չի թափի: Շօշափելիս կտորը փափուկ և
տաք կերպա... Բայց արդեօք փռած չէ: Կարե-
լի է լաւ հագնել...

Ախ, ինչ հեշտակային գեղեցիկութիւն, ինչ
սիգանձ ու վառ քայլուածք: Զարմանալի ծը-
փում են նրա գանգոյնները: Որքան նուրբ է
հագնվում միշտ (Յայտ ունի, որ դերձակնե-
րի հաշիւը լրիւ վճարում է): Որքան տաք ու
գորովալից է համբուրում ձեր ձեռքը... Ինչ
գործերի անուններ է հնարում ձեզ համար:
Որքան հաճելի է կոթնել նրա գործը բազուկ-
ներին: Ինչպիսի սիրով վառվում է նրա հա-
յեացքը, երբ իր կրակոտ ու քնքշութեամբ լի
հայեացքը նետում է ձեր աչքերի մէջ:

Բայց արդեօք պիտի համարեմ նա ձեր չըը-
նաղ ձեռքերը, երբ նրանց կաշին կնճատի ու
թաւաթի: Արդեօք ձեզ համար փաղաքական ա-
նուններ պիտի հնարի, երբ գիշերը երկնաւ օ-
րորցում լաց լինելիս դուք չը կարողանաք նը-
րան խօսնի հանգստացնել: Կամ, աւելի լաւ,
—նա պիտի առաջարկէ ձեզ գնալ հանգստա-
նալու, ու ինքը ձեր փոխարէն մնալ հիւանդ ե-
րկխալի անկողնի մօտ: Արդեօք նոյն չափով
դուք պիտի գրգռ նրա թիւ ու թիկունքը, երբ
ձեր գլուխը հոգսերով ու վշտերով պաշարված
լինի: Վերջապէս նոյն սիրով նրա հայեացքները
պիտի փնտռեն ձեր աչքերը, երբ սրանք ար-
տասունքներից միմյանիս:

II

Օ՛, որքան յաճախ է պատահում, որ մենք
ջահիլութեան կուրուքները, անցնում ենք ան-
գոյն ու անհետաքրքիր մարդկանց մօտից ծաղ-
րով՝ կամ կարեկցական ժպիտը երեսներին:
Մենք՝ փորրկի երեխաների նման, որոնց ձակա-
տի վրա բացի մի զոյգ աչքերից ուրիշ բան չը
կայ, բացառապէս վազում ենք դէպի թարմ,

պայծառ ու գեղեցիկ ծաղիկները, առանց ու-
շադրութիւն դարձնելու կամ առանց ցանկա-
նալու իմանալ, թէ ինչ է թաղանթը նրանց
փայլուն արտաքինի տակ: Մենք՝ Աստուծու չը-
նորհած պարտիկից դրախտ կը պատրաստենք,
գեղեցիկ ու զարդարուն, ձիւղ՝ երեխային նոր
ընծայած խաղալիքի նման, որով ամենքը կը
հիանան ու որին կը նախանձնեն: Այդ ուրախու-
թեան ու երջանկութեան ապաստարանում կը
բուսեն միայն անփուշ վարդեր, իրոյստ
լեւնալարեր և ձիւնանման չուշաններ, իսկ
ամբողջ տունը թաղված կը լինի դաւար գան-
գուրի մէջ: Այժմ երևակայեցէք ձեզ այս բոլոր
չըբեղութիւնը ամառային ուկեփայլ օրերից մէ-
կում, երբ մեզմ, թիւթն քամին դաշտերից մեզ
կը հասցնի խոտերի ու ծաղիկների անուշառ-
տութիւնը... Զարմարեմ չեմ, որ այս պատկերի
հետ ոչինչ չէ կարելի համեմատել: Օ՛, այս...
Իսկ եթէ մեզմ քամու փոխանակ տեղայ անձին
ու մրրկի լինչպէս պիտի մենք գողանք ու
սառսառնք մեր դրախտի անկիւնում:

Կան ուրիշ աւելի հանդարտ ու զօրեղ օրի-
նակներ մարդկային սեռի: Նրանք, ճշմարիտ է,
գեղեցիկ չեն, ոչ էլ ճարպիկ ու հետաքրքրական,
բայց դրա փոխարէն՝ ուժեղ են և յուսալի: Նը-
րանք միշտ նոյնն են, միշտ մեզմ ու հանգարտ
Ո՛չ դարունը կարող է նրանց կենդանացնել, ոչ
ամառը իր կիզիչ ճառագայթներով այրել, ոչ
աշունը չորացնել և ոչ ձմեռը մեռցնել: Նրանք՝
աչքի զարնող բաներ չեն, բայց դա նրանց չէ
խանդարում ուրիշներից աւելի խելացի և աւելի
պատկառելի լինել: Բնութիւնը հին մարդաձին
է պահում և իր լաւագոյն ապրանքը ի ցոյց չէ
հանում:

Նրանք անվրդով տանում են ճակատագրի
հարուածները, նրանք համարձակ գնում են ընդ-
հանուր լուրի դէմ: Ս. պէտք եղած դէպքում
վստահանում են կուր մղել կեանքի և մահվան

է, որ Պէշիկթաշեանին չենք ճանաչում: Բազմավէպը ասում է, որ մեր այս պատմաբանութիւնը գորաւոր չէ, որովհետեւ Պէշիկթաշեանի հայրենակիցներուն առջև պարզված են նրա երգերը: Սակայն, թոյլ ենք տալիս ասելու, որ մեզ չեն կարող համոզել այդ խօսքերը: Ընթանալով բառը մենք հանդիպում ենք ամենախալայն մտքով. ճանաչել ենք իրենց կարելի է այն դէպքում միայն, երբ ամբողջ գրագէտ մտաւորը իր ձեռքում ունի նրա գրութիւնները: Բառապատկերները, երբ նրա մշակութիւնը, գաղափարները հորհարել կերպով բացատրված են հանրամատչելի գրքերի մէջ: Մենք շատ լաւ գիտենք, որ գրադարաններում կարելի է լսել Պէշիկթաշեանի երկերը, ժողովածուն. բայց միթէ դա նշանակում է, թէ ամեն մարդ գիտութիւն ունի ցանկացած ժամանակ ձեռք առնել նշանաւոր բանաստեղծին և կարդալ նրա սիրուն ոտանաւորները: Ի հարկէ, ոչ: Դրապարանաւորները և գրադարաններին (այն էլ ոչ բոլոր գրադարաններին) մօտիկ մարդկանց համար գուցէ և հեշտ է ճանաչել եղբայրութեան երգչին: Բայց մեզք ժողովրդի մէջ, հարցերը բոլոր գրաւթաճանաչողից, և դուք ոչ մի տեղ Պէշիկթաշեան չեք գտնի. վաղուց, շատ վաղուց է հազուադիւստ դարձել նրա երկերի ժողովածուն. եթէ չենք սխալվում, նա հրատարակված է Կ. Պոլսում 1870-ական թվականներին սկզբում և այնուհետև, որքան գիտենք, ոչ մի տեղ չէ հրատարակված: Բանաստեղծութիւնները միանգամայն չեն կարդացվում ու մոռացվում. նրանց պէտք է պահել, նրանց վրա սերունդներ պէտք է կրթել: Կարծում ենք, որ Պէշիկթաշեան արժանի է իր տաղանդով, իր գեղեցիկ առողջ գաղափարներով այսպիսի մի դեր կատարել իր հայրենակիցներին մէջ: Բայց ասացէք, ինչպէս նա կարող է որ և իցէ դեր կատարել, երբ չը կայ, գոյութիւն չունի, երբ նրա գրութիւնները մի քանի անհատներին են մատչելի: Եւ այս հանգամանքը միթէ չէ ցոյց տալիս, թէ որքան խեղճ ու ողորմելի ազգ ենք: Ցոյց տուէք մի ազգ, որի մէջ ժողովրդական ամենահամակրելի երգիչներից մէկի գրութիւնները հազուադիւստ լինեն և նրանց ձեռք բերելը բոլորովին անհասանելի լինի: Ասելով թէ հայերը չեն էլ ճանաչում Պէշիկթաշեանին, մենք ունենք շատ տխուր փաստեր: Մենք չենք ճանաչում ոչ միայն Պէշիկթաշեանին, այլ և Նազաբեկեանին, Նալբանդեանին, որոնց գրութիւններն էլ այսօր հազուադիւստ են, միայն գրադարանների սեփականութիւնն են կազմում, այն էլ, կրկնում ենք, ոչ ամեն տեղ: Եւ սակայն, հայերէն որքան տարածված են, հայ մեկնասէսներ որքան շատ են: Ինչպէս է առաջանում այս պակասութիւնը: Մենք ասել էինք. այն, որ անցեալ է ներկայացնում, արձանագրված է, անյայտութեան դատապարտված, իսկ մեր գծում ժամանակների

ոչ մի բանով չեն պատկանում այն մարդկանց շարքին, որոնց այնպէս խորամանկ կերպով, հասարակութեան աչքի առաջ, բարեկամ տալիս: Եւ մինչև որ սե օրը չը գայ, մենք չը պիտի տուրքենք նրանց բառ արժանւոյն գնահատել: Ինչպէս որ թուրքները, մինչև ձեռք չը գայ, չեն հասկանալ, թէ ինչպէս աւելի խելացի է ընի համար մշտադաւար փշեր ընտրել, քան թէ հրապուրիչ, բայց խաբուսիկ տերևախիտ օստեր...

III

Այժմ հերթն եկաւ ձեզ, երիտասարդ պարսիներ: Լաւ կանաչեք դուրս են դալիս անսիրտ պնդաբարդները, որոնք իրանց քմահաճութիւններով ձեզ չանտ անգամ խելից հանում են: Այն, որքան հրաշալի է նա: Այնպիսի ճաշակով, այնպիսի վարպետութեամբ է հագնվում, որ կարծես տիկնիկ լինի: (Շորերի ու զարդերի նուրբութեամբ բազմաթիւ դէպքերից մէկը իբրև կենանքի արձանիք): Ո՛չ մի բարձր ձգտման չէ նուիրվում նա: Եւ որքան հետաքրքիր, գրաւիչ, հմայիչ ու սիրելի է նա: Պատկերացրե՛ք յետոյ էլ նա այդպէս գեղեցիկ կը հագնվի, էլի սիրելի, հետաքրքիր և գրաւիչ կը լինի, եթէ ոչ հարկաւորապատիկ լաւ, գոնէ այսպէս: Բայց թէ, իսկապէս, ում կինը պիտի լինի նա, զբաղից դուք ոչ պիտի մոռնէք, ոչ տաքանաք: Ուրիշ է-րիկներին նա պիտի հետաքրքրէ, հրապուրէ, հազարներին պիտի գրաւէ, բայց նրանց թուով դուք չը պիտի լինէք: Իսկ բոլոր ծախքերը դուք պիտի հոգաք: Բոլոր եղած-չեղածի պատասխանատուութիւնը դուք պէտք է ձեր վրա առնէք: Դուք ձեր պնդանք կնոջ իբրև արտօնաւոր պիտի հանդիսանաք, իսկ նա որպէս տաղանդաւոր դերասանուհի, պիտի սկսէ հրճված ամբողջութիւն ընտրել ու չընադրութիւնը ցոյց տալ: Բոլորը բերանարարաց նրան պիտի նային, հրճվեն, հալչեն, նրան հանդուստութիւններ անեն, նրա հետ խաղան: Դուք ձեզ մի տեսակ

վտիտ գործիչները որ ու գիշեր տքնում են իրանց պատմութիւնը գրելու համար: Թիֆլիսի մի հայ ամսագրի խմբագիր, իր պատկերը տեսնելով այս խօսքերի մէջ, ծուր-ծուր եղաւ, սկսեց իր արածները թելել ու գովել: Եւ հենց այդ տեսակ վարմունքը փառաւորապէս ապացուցեց մեր խօսքերը: Բաւական չէ, որ չենք իմանում թէ ինչ պէտք է տալ, դեռ պարծենում էլ ենք դրանով...

Բազմավէպը համաձայն չէ մեզ հետ նաև այն բանի մէջ, որ Վենետիկի ս. Ղազարի վանքը յետագիտում է գրական աշխատութիւններ կողմից: Մենք ասել էինք, թէ Մխիթարեանների մատուցը այլ ևս չէ տալիս մեզ «Հայկազեան բառագրքի» պէս ակադեմիական գործեր: Մեզ պատասխանում են.

Թէ ինչպէս արդ իր լիցատակած ակադեմիական աշխատութիւնն ըն իր հրատարակելը, այդ հարցնելու է Վենետիկի մամուլին երախտագէտ, բարեկամ և խրախուսիչ հայ հասարակութեան Նոյն եռանդը և դեռ ու ալ աւելի: Վենետիկի ձեռնարկ, միջակ և երիտասարդ և առհասարակ ամեն միաբաններու մէջ վառ է և դայն կուզեն ցոյց տալ, բայց որո՞նք, և եթէ այդպիսի յաղթանակով երկեր մի միայն եռանդով և կամ ուղեղի արդեամբ կը հրապարակուին, այդ շատ դիրքին, միայն խոչընդոտն չըլլան ուրիշ զօրեղ դժուարութիւնը:

Որ ս. Ղազարի վանքն ունի մի քանի մեծ աշխատութիւններ (Տ. Ալիշանի) և չէ կարողանում տպագրել նրանց նիւթական միջոցները պակասութեան պատճառով, այդ արդէն յայտնի է Մշակից, ուր տպիկցան երկու մեծ յորտածներ, որոնց մէջ յորդորում էինք հայերին օգնել բազմաթիւն ձեռնարկ հեղինակին: Մեզ համար առհասարակ ցաւալի կը լինի, եթէ աշխարհի երեսին որ և իցէ տեղ կայ հայերէն մի գեղեցիկ, օգտակար գիրք, որ չէ հրատարակվում Նիւթական միջոցների պատճառով: Բայց մենք ասելով թէ ակադեմիական հրատարակութիւններ չեն լինում Վենետիկում, մասամբ ունենք ի նկատի և այն հանգամանքը, որ նոյն իսկ հրատարակչական գործն էլ ընկած է ս. Ղազարի վանքում: Այսպէս, մի քանի տարի առաջ Վենետիկում հրատարակվեցան Փաւստոս Բիւզանդացի և Ղազար Փարպեցի, իր անթիւ տպագրական սխալներով, այնպէս որ մարդ դարձանում է, թէ ինչպէս մի գիտնական միաբանութիւն թոյլ տուեց, որ այդպիսի հրատարակութիւնները լոյս հանվեն: Այս երկու գործը, իբրև նմուշ, յիշատակեցինք. և սակայն պէտք է, որ այս տեսակ գործերը մէջ ամենից քիչ երևային հրատարակչական պակասութիւններ: Մենք կարծում ենք, որ առհասարակ սխալված չենք այդպիսի վկայութիւն տալով ժամանակակից Մխիթարեաններին: Միայն Սոյն հաստատում է և ինքը, «Բազմավէպը», որ մի տեղ ասում է, թէ այժման միաբաններն էլ գիտեն լաւ աշխատել, բայց մի քանի տողից յետոյ գրում է.

Բարեգործ պիտի համարէք մարդկային սեւին (մանաւանդ նրա արական կտորին) ձեր այդպիսի մեծ բաւականութիւն պատճառով: Իսկ դուք ինքները դժուար թէ կարող լինէք մասնակցել այդ բաւականութեան, որովհետեւ, չեմ կարծում թէ այդպիսի մարդասիրութիւնը ձեզ համար պատճառէ: Դուք գուրկ պիտի լինէք այն ընդոյշ հայեացքներից, նենդաւոր փայտներից, որ ձեր կինը ալ ու ձախ պիտի ծախսէ: Երեկոյցից յետոյ երբ տուն վերադառնաք, ձեր կինը պիտի թթու, յոգնած դէմք ցոյց տայ, նա, ի հարկէ, ձեռքները թաղցնելու քան չունի: Նրա աչքերի կենդանութիւնն ու փայլը իսկոյն պիտի փոխվեն անբաւական, մարած հայեացքի: Նրա գրգռված մտքերը և հին, կեղտի մէջ կորած հագուստը ձեզ տնաճութիւն պիտի պատճառեն: Բայց հարց, տան մէջ ում համար հագնվի: Ամուսնու համար: Այդ նշանակում է զուր վառօդ վատնել: Նա իր գործը դանձերը պահում է հասարակութեան համար, այն երիտասարդների համար, որոնք կազմում են նրա երկրպագուների բանակը: Իսկ ձեզ, նրա ամուսնուն, աւաղ, մնում է բաւականա՞նք այն զլխացաւանքով, որ անմիջապէս յոգնածութեան է հետևում: Անբաւականութիւն և կոտորածներ, կամ չար, յամառ լուծութիւն—անհայն վայելչութիւնը, որ սպասում է ձեզ տանը: Եւ իսկապէս, ամբողջ օրը չարաբարդութեամբ, այն էլ այնպիսի ճարտարութեամբ, ընդոյշ, օղեղէն աղբաւորի դերն է մէջ: Ինչ գուարժանութիւն է տանը դիմակը վեր առնել ու հարկաւորապատիկ վարձատրել իրան, աղատութիւն տալով անկրթութեան, կոպտութեան ու քմահաճութիւններին...

IV

Լաւ կը լինի, որ արդէն ոչ թէ այնպիսիների հետ, որոնք հասարակութեան մէջ փայլում են, այլ այնպիսիների հետ, որոնք իրանց քաղցր և ուրախ բնաւորութեամբ կենդանութեան

Իրեն (այսինքն մեր) ակնարկած նշանաւոր ոյժերու (ինչպէս Տ. Ալիշան) երկուսը, դարեւոր հողմանց կը կարօտի. ցուցէք մեզ, սիրելի Մշակ, այսպիսի տարիներէ ի վեր ինչ նոր Բաֆֆի մը, Պատկանեան մը և կամ Արովեան մը ունեցաք, և այդ՝ ձեր միջոցէն աւելի ուստանայ ստուար հասարակութեան մէջ, արդ ինչ խոտապահանջութիւն է անգուրգական տաղանդներու հեշտիւն և շուտով երեւում: Ի միաբանութեան մէջ, որ փոքրաթիւ անդամներէ՝ հարկ 50 միաբաններէ կազմուած է:

Երբ հարցը այդպէս է դրվում, մենք, ի հարկէ, ոչինչ չունենք ասելու, բացի գուցէ նրանից, որ գրական մեռելութիւնը, ուրեմն, համարաւոր է հայերի մէջ, ուր էլ լինեն նրանք: Բայց այս դէպքում էլ մի շատ հետաքրքրական հարց է ծագում. ինչպէս էր, որ Ս. Ղազարի վանքը Մխիթարից մինչև ներկայ դարի կէսը միմեանց յաջորդող մի շարք նշանաւոր, տոկուն գրական գործիչներ արտադրեց ու յանկարծ այդպէս ամուլ դարձաւ: Երեկ այս հարցը ուսումնասիրելու համար մենք առաւ նիւթ կուսնենք, երբ կուսնենք Մխիթարի և Մխիթարեան միաբանութեան մանրամասն պատմութիւնը. իսկ այդպիսի պատմութիւն, որի բացակայութիւնը մենք արձանագրել ենք, «Բազմավէպը» ասելով, պիտի հրատարակվի 1901 թիւն, երբ քանում է Մխիթարեան միաբանութեան երկու հարկաւորութեան:

Մի այլ կէտ, որի վերաբերմամբ մեզ հետ համաձայն չէ «Բազմավէպը», այսպէս է ձեւակերպված.

Դարձեալ Մշակ աւելի ուղղամիտ ընթացք մը բռնած կըլլայ, եթէ իւր գրիչը միջնադարեան կրօնից իւր խարաղան, և տարվիրականութեան իւր դպրիկի տերն չը գործածէ: Մշակը իրար կը հալածէ, կը պախարակէ ու կը ծաղիկէ այն կրօնը, որ միջնադարեան կը կոչէ. կրօնական ապատութիւնը չըլլայ չունի, և եթէ արդի գիտնոյ՞նք առջև միջնադարեան կրօնը բանդալուշանք կը համարուի, և տարվիրականութիւնը միջնադարեան իմաստասէրի առջև՝ ծիծաղալար ընթացքութիւն:

Յուսում ենք, որ «Բազմավէպը» աւելի պարզ չէ լսելով այս դէպքում: Կանանք այսօր, որ «Մշակը» երբեք կրօնների էութեան դէմ չէ եղել և ամենից շատ յարգել է կրօնական աղատութիւնը: Ընդհակառակը, «Մշակի» քաղձանքը եղել է այն, որ ամեն մէկը կատարեալ աղատութեամբ դառնէ իր կրօնը, որ կրօնը ձև ու ձէս չը մնայ, այլ դառնայ մարդկանց ղեկավարող կենդանի, մաքուր, իդէալական գործ: «Մշակը», ճիշդ է, անհայտ թշնամի է եղել կրօնական փանատիկութեան, կղերական նախապաշարունակներին, անհամբերողութեան, բթամտութեան: Բայց այդ թշնամութիւնը, որից նա չէ հրաժարվել և չը պիտի հրաժարվի, հիմնված է այն պարզ հանգամանքի վրա, որ այդ բոլորը ոչինչ կապ չունեն մաքուր, իդէալական կրօնի հետ. կղերա-

թիւն են տալիս ամբողջ տանը ու գեղեցատունին: Կան մարդիկ, որ միմիայն չուկանքումն են դնալիցնոյ: Բայց կենանքի ցանկալի ուղեկիցները ծօ միշտ փայլուն երիտասարդ կամ սառնի առեւծուհին չեն լինելու: Շիտակ բնատրուութիւններ, պարզ, առողջ կենտրոն տէր մարդկանց հետ ներկայացնում են ընտանեկան երջանկութեան աւելի դիմացկուն տարր: Այդպիսի մարդիկ անձրեւելի՞ ծիծաղելով բաց են անում իրանց հովանոցը և աներկիւղ ու անհոգ գնում են քաղաքաւոր ուղիով, ոչ միայն հողով չընկճվելով, այլ և մեր մէջ աշխարհութիւնը վարձեցնելով: Այդպիսի մարդիկ միշտ պատրաստ կանգնած են ձեզ օգնութեան ձեռք մեկնելու, երբ ձեր ոյժերը ձեզ դաւաճանեն: Այդ մարդիկ չենք ասելով զօրեղ ու բարի են փորձութեան ու վշտի քուլիին:

Նրանք յուսումնալի են արթնում են: Իսկ այս յատկութիւնների մէջ թագնված է ոչխարի և շան տարբերութիւնը: Ընդհանրապէս, կանանց վրա աւելի կարելի է շատ քիչ կան այնպիսի տղամարդիկ, որոնք հասարակութիւնն ամեն միջոց դերակցում է իրանց լիցի: Ինչ են ունենում այդ տեսակ շնային առաքելութիւն: Եթէ կենդանաբանական համեմատութիւն անենք, նրանք աւելի կատուի են նման: Կին կայ որ, տեսնում ես, քան տարի իր ամուսնու հետ ապրում է կատարեալ համեմատութիւն, ոչ մի անգամ մտքից չանցնելով թէ, իր մտածմունքի տարված ժամանակ, կատուն կատու է չանկուել կամ յախտակել...

Այս դարում, որի մէջ մենք ենք ապրում, չը կայ մի այնպիսի դպրոց, ուր տղամարդկանց մէջ կարելի լինէր դարգացնել այնպիսի յատկութիւններ, ինչպէս անձնութիւններն ու հասարակութիւններն են: Հին, բարի ժամանակներում, մեր նախնիքը այդպիսի դպրոց համա-

կանութիւնը համարել կրօնի էութիւն, ֆանատիկսութիւնը, խաւարաւորութիւնը և այլ այսպիսի խաւար գործեր կրօնի հոգի համարել: Ինչ ինչ ուղում էք, ասացէք—մենք այսպիսի մեղքից հեռու ենք եղել: Եւ իրար Դարվիրին էք պատճառ համարում, որ մարդիկ այսպէս են մտածում: Դեռ Դարվիրն չը կար, երբ Լիւթեր կար: Մենք ոչինչ չունենք, որ միջնադարեան իմաստասէրը Դարվիրի թէօրիան ծիծաղալար ընթացքութիւն է համարում: Բայց ոչ կարող է պահանջել և առհասարակ կարելի է պահանջել, որ միայն միջնադարեան իմաստասէրը համարվի բարեմիտ, ճշմարտախօս, անսխալական...

ՆԱՄԱԿ ԱՍԽԱԿԱԼԱԳԻՅ

Յունիսի 28-ին

Յունիսի 25-ին տեղական հաշտարար դատարանում քննվում էր մեր գաւառի Մեծ-Գեօն դուրա գիւղի բնակիչ Յարութիւն Կարօեանին վախառութեան մէջ մեղադրելու մի գործը. գանգատաւորը Փքըր-Գեօն դուրա գիւղի բնակիչ Կարապետ Դոնեբեանին էր: Դանգատի ընթերցումը ստակալի տպաւորութիւն արեց ներկայ եղող հասարակութեան ինտելիգենտ մասի վրա: Ահա այդ արձանագրութիւնը:

Սօս 13 տարի առաջ գանգատաւորի հայրը պարտք է վերցնում Կարօեանից 10 բուրբուխ, 2 սոմար դարի և 30 կող ցորեն. փողը վերցնում է 20%-ով, իսկ ցորենն ու գարին՝ զատկաբերով, այսինքն բացի գիւղից՝ տոկոսի տեղ պարտաւոր էր վճարել նաև պարտքով վերցրած հացահատիկի մի քանորդ մասը: Անբարեխաղ ճանդամներների պատճառով հայրը չէ կարողանում իր ժամանակին վճարել պարտքը և հարկադրված է լինում մուրհակը նորոգելու: Էլ աւելի վախառութեան հիմունքներով, այն է՝ 25%-ով վրա: Այդ պարտքի թէկուղ մի մասը ծածկելու համար՝ գանգատաւորը երեք տարի ծառայում է Կարօեանի մօտ, որից յետոյ պարտքը դեղվում է 150 բուրբուխ, իսկ մնացած պարտքը համար նոր մուրհակ է դրվում էլի 20%-ով: Երկու տարի յետոյ, առաջը օրինական վճար, Կարօեան այդ պարտքի հաշին վերցնում է պարտատիրոջ 5 եղ և մի գոմշակով: Պարտապանը դրանով էլի չէ կարողանում ազատել չոյին, այդ բոլորից յետոյ նա պարտք է մնում էլի 150 բուրբուխ, բայց տոկոսներով միայն, որոնք կազմում են 20-ից մինչև 25-ը: Հասնում է 1893 թվի ճակատագրական դարում:

Նր. գալիս է պարտատէր Կարօեան և պարտապանից քաշում, տանում է 35 հատ կթի: Ոչ խար իրանց դառնեցով, մի կթ, մի մատակ ձի, մի գոյգ եղ, մի դէղ խոտ և 56 հատ «ուռուր» անոնով թիւրքական դրամ, ամեն մէկը մի բուրբուխ արժողութեամբ: Այդ աւերածութիւնում էին պատերազմը: Իդէալի համար խորոյկ վրա մեռնող նահատակները, մեզ համար նոր երկիր տիրելու նպատակով, տարբեր ճեղ կուղ անվիճելի ծովագնացը, մեզ համար լոյս ու ճշմարտութեան ճանապարհ հարթող յեղափոխողները: Եւ ամբողջ կենտրոն գիտութեան ու արտեսիւն նուիրած գիտնականները, այն էլ այնպիսի խաւար դարերում, երբ գիտութիւնն ու արտեսները իրանց հետ բերում էին հալածանք ու աղքատութիւն և ոչ թէ փառք, ինչպէս այժմ. — անհայտ տեսակ մարդիկ միայն կարող էին սերունդը ստեղծել, որ կուէր դաշտում, մայր աչքն առած, իր դռնակը կանգուն պահել գիտնայ մինչև վերջը:

Դուք, ի հարկէ, ծանօթ կը լինէք ձեռնարկ Վիկինգի սրտառուչ պատմութեան հետ, որ համաձայնեցնում է տալիս քրիստոնէութիւն ընդունելու և մկրտութեան ծէսի ժամանակ յանկարծ ասում է. «Բայց ինչպէս, դուք ասում էք, թէ դրախտ գնալու միակ միջոցը մկրտելն է: Հապա ինչ եղան իմ ընկերներս, որոնք հեթանոսութեան մէջ մեռան: Ո՞րտեղ են նրանք: Այդ տեսակ անապատիկ հարցից չիթոված միսթոնները պատասխանեցին, թէ նրանք անկասկած գեհնում կը լինեն: Այն ժամանակ ձեռնարկ Վիկինգը յետ քաշվեց ու ասաց. «Ես չեմ ուզում մկրտել: Ո՞րտեղ ընկերներս են, անտեղ էլ ես կը լինեմ: Նա ապրում էր նրանց հետ, միասին կուտում էին, այժմ էլ վճեց գնալ նրանց տեղից, ոչ թէ աշխարհի ծայրը, այլ մինչև անգամ աւելի հեռու—դժոխք... Վիկինգի արածը, եթէ ճշմարիտը խոստովանենք, անհաշիւ բան է. բայց հաւատացնում եմ, արժէք նոյն իսկ մեր քաղաքակրթութիւնը տալիս է միայն այդ գնով: Կարելի լինէր ստեղծել այս տիմարի նման տիպեր:

Միք. Զառաֆեանց

30 ԵՐԵՎԱՆԻ

1 լուրիսի

ՅԵՏԻՆԻԷ: Թագաժառանգ Յեսարեվիչի մա-
վան տոլթով, մայր եկեղեցում, իշխանակա-
գույցի և դիպլոմատիական մարմնի ներկայ-

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ի դժուար վարչութեան—Նախագահ՝
1—1 Մարգար Տէր-Յակոբեանց

4 0 1 2 6 6 4 0 1


- Заказъ въ контору изданія А. Б. Раскина
Варшава. Дикая 5. У. 1—3

[Faint, illegible handwritten notes]

Հասցէն թողնել «Մշակի» խմբագրատանը:
(Հ. Ն. Ե.) 2—3

149—151 ԲԺՇԿԱԿԵՆ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ

սաւորութեան, տրամալայների և
ժի հաղորդելը հեռաւորութեան վր



ՏԷԼԵՖՈՆ № 642.

ՅԵՄԵՆՏԻ ՎԱՃԱՌՈՒՄՆ
(1 1 1) 18 100

LEO

(Պատմական պէս, 755 հրես)

Գ/հ/ը 1 ՐՈՒԲ. 30 ԿՕՊԷԿ (սակեկազմ 2 բուբլի)

Հրահանգի համաձայն՝ **ТИФЛИСЪ.** редакция „**Мшакъ**“.

ՅՈՎ ՀԼԿՆԻՍ ԷՊԻՍԿՈՊՈՍ ԸՆՀԵՄԹՈՒՆԵԱՆՅԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ

գրեց Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեան:

Գ Ի Ն Ը Դ Բ Ո Ւ Բ Լ Ի

Մարտի 1-ին ընդունվել է «Բնակավայրերի կառուցման մասին» ՀՀ օրենքը:


Կենտրոնական գրադաճառանոցում ծախվում է նոյն հեղինակի

ԱՐԴԱՆԱԿԱՆ ԷՆԴԵՐՆԵՐ

ԳԻՆԸ 1 ԸՈՒՐԵԼԻ

(1-13)

1997



Եւ Վերականգնելը

Լ. ԽԱՆ-ԱՂԵԱՆԻ

250 նկարով: Գինն է 50 կօպ.

Тифли Тиблнсь. Обществу Изданія Армянскихъ Книгъ. (К. н.) 47—50